ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE92-DB0B-4F20-854D հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/11174/02/25 | ք. Երևան
26 Դեկտեմբերի 2025թ

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դանիել Միխեյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/11174/02/25 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑ

«Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ նաև Հայցվոր կան Ընկերություն)՝ ի դեմս ներկայացուցիչ Արամ Ծահինյանի, հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ նաև Դատարան) ընդդեմ պատասխանող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատասխանող)՝ հայցելով Պատասխանողին պարտավորեցնել հրապարակել A-602/25 ծածկագրով առաջարկների բաց հարցման գնման ընթացակարգի 4-րդ, 5-րդ, 6-րդ լոտերի մասով Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և

որպես հետևանք «Դիէներջի» ՍՊ ընկերության 4-րդ և 5-րդ լոտերով, «Էկրա Կովկաս» ՍՊ ընկերության 6-րդ լոտով առանց Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագրերը ճանաչել առ ոչինչ:
Դատարանը (դատավոր՝ Ա.Օհանյան) 27.10.2025 թվականին կայացրել է որոշում հայցադիմումը վերադարձնելու մասին:
Հայցվորը հայցադիմումը կրկին 29.10.2025թ.-ին ներկայացրել է դատարան:
Դատարանը (դատավոր՝ Ա.Օհանյան) 04.11.2025 թվականին կայացրել է որոշում հայցադիմումի ընդունումը մերժելու մասին:
Հայցվորի կողմից դատարանի 04.11.2025թ.-ի որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որի արդյունքում ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը 10.12.2025 թվակա-նին կայացրել է որոշում հետևյալ բովանդակությամբ, այն է՝ «1. Վերաքննիչ բողոքը բավա-րարել: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 04.11.2025թ. թիվ ԵԴ2/11174/02/25 «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացնել և քաղաքացիական գործն ուղարկել նույն դատարան՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելու նպատակով»:
Մասնավորապես ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը որոշմամբ արձանագրել է, որ՝ «... Տվյալ դեպքում «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետևում է, որ հայցվոր ընկերությունը գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացրել է հայտ: Ընթացակարգի գնահատման հանձնաժողովի արձանագրություններից բխում է, որ հայցվոր ընկերությունը հաղթող չի ճանաչվել, ինչը հիմք ընդունելով հայցվորը Դատարան է ներկայացրել մեկ հիմնական պահանջ, այն է՝ պարտավորեցնել պատասխանողին հրապարակել գնման ընթացակարգի 4-6-րդ լոտերի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարա-րությունը, իսկ որպես ածանցյալ պահանջ՝ «Դիէներջի» ՍՊ ընկերության 4-րդ և 5-րդ լոտերով, «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊ ընկերության 6-րդ լոտով առանց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրա-պարակման կնքված պայմանագրերն ճանաչել առոչինչ:
Հետևում է, որ հայցվոր ընկերությունը հայցադիմումով վիճարկել է պատվիրատուի անգործությունը (գործողությունները), իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման ուժով՝ Դատարանը սույն գլխով սահման-ված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների

բողոքարկման հետ կապված վեճերը:
Տվյալ դեպքում հայցադիմումում ներկայացված հիմնական պահանջը բխում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի «10-րդ հոդվածի 1-ին մասի (մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը) կարգավորումից: Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ պատասխանողին ուղղված նյութաիրավական հիմնական պահանջից բխում է, որ այն բովանդակային առումով ուղղված է եղել գնման ընթացակարգի շրջանակներում ընկերության քաղաքացիական իրավունքների սպաշտպանությանը, և վեճի քննության պահի դրությամբ ներկայացված հայցի շրջանակում հայցվորի սուբյեկտիվ իրավունքների վերականգնմանը:
Այս տեսանկյունից անհիմն է Դատարանի հետևությունն առ այն, որ սույն դեպքում հայցվորի կողմից ներկայացված պահանջներից մեկը՝ պայմանագրերն առոչինչ ճանաչելու պահանջը, ենթակա չէ քաղաքացիական դատավարության կարգով քննության, նկատի ունենալով, որ դատական կարգով նման պահանջի ճանաչման հնարավորությունը նախատեսված չէ ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այնպես էլ որևէ այլ օրենքով կամ իրավական ակտով: Տվյալ դեպքում ինչպես երևում է ներկայացված պահանջների բովանդակային ուսումնասիրությունից՝ պայմանագրերն առոչինչ ճանաչելու պահանջը ներկայացվել է որպես ածանցյալ պահանջ: (...)»:
Քաղաքացիական գործը մակագրվել է դատավոր Դանիել Մխեյանին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասի համա-ձայն՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը վերացվելու դեպքում առաջին ատյանի դատարանը հայցադիմումն ընդունում է վարույթ, եթե բացակայում են սույն օրենսգրքով նախատեսված հայցադիմումը վերադարձնելու հիմքերը, իսկ սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված անվերապահ բեկանման հիմքերից որևէ մեկով հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը վերացվելու դեպքում առաջին ատյանի դատարանը հայցադիմումն ընդունում է վարույթ, եթե բացակայում են հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձ-նելու հիմքերը: Այս դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:
Դատարանն արձանագրում է, որ բացակայում են 127-րդ հոդվածով սահմանված՝ հայցադիմումը վերադարձնելու հիմքերը:
Դատարանը, հիմք ընդունելով, ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը, արձանագրում է, ներկայացված հայցը ենթակա է քննության ՔԴՕ 27.2 գլխի կանոններով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում՝ հիմք ընդունելով ՔԴՕ 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է

պատասխանող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր սահմա-նել 02.02.2026 թվականին:
2. Պատասխանող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Պարզաբանել կողմերին, որ՝
- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանք-ների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.
- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափու-թյունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:
- Հայցադիմումի պատասխանը կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
- գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:
- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների

(անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by MKHEYAN DANIEL 2908790114
Date: 2025.12.26 18:16:59 AMT

Դատավոր՝ Դանիել Մխեյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am